ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՑ 30-Ը ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

   Արմեն Սիմոնյան
   Նունե Պապիկյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ,
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության միջտարածաշրջանային համագործակցության և արարողակարգի բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Շվեյցարիայի Համադաշնություն՝ Բեռն, 2021թ. սեպտեմբերի 27-ից 30-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Միջազգային երկաթուղային փոխադրումների միջկառավարական կազմակերպության (OTIF) Գլխավոր քարտուղար

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցել Միջազգային երկաթուղային փոխադրումների միջկառավարական կազմակերպության (OTIF) 15-րդ Գլխավոր համաժողովին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Գլխավոր համաժողովին ներկա անդամ պետությունների պատվիրակությունների, այդ թվում՝ ՀՀ ՏԿԵՆ պատվիրակության գաղտնի քվեարկությամբ վերընտրվեց OTIF Գլխավոր քարտուղարը, ով այս պաշտոնը ստանձնել էր 2019թ-ին:
   Ներկայացվեցին կազմակերպության իրավաբանական փորձագետների կոմիտեի և ադմինիստրատիվ կոմիտեի զեկույցները հաշվետու ժամանակշրջանի համար, հաստատվեց կազմակերպության բյուջեի շրջանակը, կոնսենսուսի ձևաչափով կազմավորվեցին կազմակերպության կոմիտեները հաջորդող երեք տարիների համար, որոշվեց հաջորդ համաժողովի անցկացման ժամկետը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Համաժողովի շրջանակներում առանձին հանդիպումներ տեղի չեն ունեցել:
   Անդամ երկրների կողմից բարձրացվել են հարցեր, ինչպես օրինակ անդամավճարի պարտքի հետ կապված հարցը Սիրիայի դեպքում, որոնց վերաբերյալ որոշումներ են կայացվել կոնսենսուսի եղանակով կամ քվեարկությամբ: Կոնսենսուսի եղանակով որոշվել է քվեարկության ձևը՝ բաց կամ գաղտնի, որից հետո քվեարկության են դրվել համաժողովի օրակարգային հարցերը: Համաժողովի մեկնարկին ընտրվել են 15-րդ Գլխավոր համաժողովի նախագահը և վերընտրվել է OTIF Գլխավոր քարտուղարը՝ ազգությամբ գերմանացի Վոլֆգանգ Կուպերը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման ավարտին կազմվել է ամփոփիչ փաստաթղթի նախնական տարբերակը, որը ուղարկվել է անդամ պետություններին:

Այցի արդյունքերով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համաժողովի նախագահը և կազմակերպության քարտուղարությունը բարձր գնահատեցին պատվիրակությունների ակտիվ ներգրավվածությունը և մասնակցությունը համաժողովին, որը տեղի է ունենում 3 տարվա պարբերականությամբ:

Որոշվել է արդիականացնել OTIF-ի գրասենյակը:

Առաջարկվել է շարունակել աշխատանքները Միջազգային երկաթուղային փոխադրումների միջկառավարական կազմակերպության հետ՝ երկաթուղային փոխադրումների միասնական օրենքի ստեղծման շուրջ:

Կազմվել է նախնական եզրափակիչ փաստաթուղթը, որը ուղարկվել է անդամ երկրներին՝ նկատառումներ և դիտարկումներ ներկայացնելու առաջարկով:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ/ԱՄՍԱԹԻՎԸ

04.10.2021թ